ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Վիկտորյա Քեշիշյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի պետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Վրաստան, ք.Թբիլիսի, 22023 թվականի նոյեմբերի 20-ից 24-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Միջազգային էներգետիկ կորպորացիա

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն նոյեմբերի 21-22-ին կայացած EU4Energy ծրագրի շրջանակներում կայուն տրանսպորտի քաղաքականության ֆորումին և նոյեմբերի 23-ին կայացած Միջազգային էներգետիկ գործակալության փորձագետների հետ կայացած առանձնացված հանդիպմանը

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   էներգետիկ բնագավառի ԵՄ 2050 հավակնող ծրագրին ընդառաջ՝ տրանսպորտի բնագավառում ցածր ածխածնային արտանետումներին հասնելու ուղղությամբ գործադրվող միջոցառումները (կայուն տրանսպորտ, էլեկտրատրանսպորտ, լիցքավորման կայաններ/օրենսդրական կարգավորումներ)

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   EU4Energy ծրագրի շրջանակներում տարածաշրջանային ֆորումին մասնակցում էին էներգետիկայի և տրանսպորտի բնագավառների, վիճակագրության ոլորտի փորձագետներ միջազգային կառույցներից (Եվրոպական հանձնաժողով/EC, ԵՄ4Energy ծրագրում ընդգրկված Միջազգային էներգետիկ գործակալություն/IEA, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի/UNECE), ինչպես նաև Արևելյան Գործընկերության երկրներում վերոնշյալ հարցերով զբաղվող գերատեսչությունների ներկայացուցիչներ:
   Քննարկված հարցերի շրջանակներում էին էներգետիկայի և կայուն տրանսպորտի բնագավառների մարտահրավերները, օրենսդրական կարգավորումները, խոչընդոտող հանգամանքները (գազից կախվածությունը, վառելիքի ծախսը, էլեկտրատրանսպորտային միջոցների և վերականգնվող էներգետիկայի զարգացումը), տարածաշրջանային մակարդակով հետագա համագործակցության ուղղությունները, ԵՄ աջակցության հարցեր:

Միջոցառման շրջանակներում կազմակերպվեց այց Թբիլիսիում բիովառելիքի արտադրության կայան:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպման մասնակիցները շեշտեցին համագործացության շարունակականության ապահովման անհրաժեշտությունը, կարևորեցին ԵՄ հետագա աջակցությունը տվյալների հավաքագրման և մեթոդաբանական հարցերով և ծրագրային ապահովման մասով, ինչպես նաև միջազգային մյուս կառույցների հետ միասին աշխատանքների կազմակերպումը և փորձի փոխանակումը մասնակից երկրների հետ:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Պայմանավորվածություն ձեռք բերվեց հավելյալ նյութերի տրամադրման, հաջորդ հանդիպումների քննարկման հարցերի նախապատրաստման վերաբերյալ:

ՀՀ ՏԿԵ նախարարության էներգետիկայի
վարչության ՎԷ բաժնի պետ Վ. Քեշիշյան